

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՎԱՀԵ ՀԱԿՈՔՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ
<<ԿԱՊԱՆԻ ՕՐ>> ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ կապանցիներ

Շնորհավորում եմ բոլորիս մեր սիրելի Կապան քաղաքի տոնի կապակցությամբ:

Կապանը ունի հերոսական անցյալ,հարգանքի արժանի ավանդույթներ ,նվաճումներ,որոնցով բոլորս հպարտանում ենք:

Ճակատագիրն ինձ հնարավորություն է ընձեռել աշխատելու Սյունիքի մարզպետ, և ես ուզում եմ բոլորիդ հավաստիացնել, որ հպարտություն եմ ապրում ճակատագրի այդ շնորհի համար, և համոզված եղեք, որ կներդնեմ ողջ ներուժս՝ Կապանն ավելի գեղեցիկ,իսկ կապանցիների կյանքն առավել բարեկեցիկ դարձնելու համար:

Մեր բոլորիս ջանքերն նպատակաուղղված են այն իրողությանը,որ դուք ձեր կապվածությունը Կապանին պայմանավորեք ոչ միայն ծննդյան և գրանցման փաստով,այլ նաև Կապանում աշխատելու, արարելու և բարեկեցիկ կյանքով ապրելու արժանապատիվ հնարավորությամբ:

Ցանկանում եմ,որ բոլոր կապանցիների կյանքի մշտական ուղեկիցները լինեն խաղաղությունը, առողջությունը, հույսը, հավատը և սերը:

Հարգանք ու պատիվ բոլոր կապանցիներին, պատասխանատվություն քաղաքի ներկայի և ապագայի հանդեպ, բոլորիս նպատակների իրականացում:

Տոնդ շնորհավոր, մարզկենտրոն Կապան: